

ՔԱՆԻ ՄԻ ԽՈՍՔ

ԳԱՐ-ԱԼԻ ՇԱՀԻ ՎԵՐԱՅ

Եւ յուշահ նրա որդիներէ, բառադրներէ,
Բառներէ և նե նրան+ էրը, ինչ հօրէ նև ծը-
նած, ամ հետ չն ամսանացած և նրանցից
աման+ ինչ յիշ+եր և ակտուաներ նև սունեցած,
Նոյնպէս նրա կանաց ինչ շեղէ, ինչ աղջէ
լինել և ինչ յիշ+եր կամ ակտուաներ նև սո-
նեցէլ:

Գաթ-Վլի-Շահն էր որդի Հիւսէյն
- Կուլի խանի, որդւոյ Մամադ - Հասան
խանի, որդւոյ Գաթալի - խանի, որդւոյ
Շահ - Կուլի խանի, որդւոյ Մէհմէթի
խանի, որդւոյ Վէլի խանի, որդւոյ Մա-
մադ - Կուլի խանի՝ Կաջար ցեղէն:

Եւրոպայի պատմիչները Կաջարների
հարստութեան հիմնադիր համարում են
Գաթ-Վլի շահի հօր եղբայր ներքինի
աղայ Մահամմէդ Շահը. բայց Պարսից
պատմիչներն սկսում են էս հարստու-
թիւնը Գաթ-Վլի խանէն, որ էր որդի
Շահ - Կուլի խանի, որպէս թէ նա իւր
հօր մահուանէն յետոյ աիրեց Մուրա-
րէք - Վրադ բերդին, պնդացրեց էն, իւր
աթուանիստը շինեց, այնուշետև սկսեց
տիրել Վազանդարանին. իրրեւ Շահ
Թամասը ին փոխանորդ եղաւ, նրան մեծ
գորք կազմեց վեր առաւ տարաւ Խօրա-
սան, և ուխտատեղի Մաշատ, ուր 1139
հիջրին, Թամադ - Կուլի խան Վֆշարն
(որ յետոյ Կաջիրշահ) կասկածելով նրա-
րանէ, էն ուխտատեղումը զլեսատել է տը-
ւել:

Գաթ-Վլի խանի որդի Մահամմէդ
- Հասան խանը իւր հօր սկսնուելէն

յետոյ, կասկածելով Կաջիրէն, փախչումէ
գնում Թառլքմաների մէջը, հեծելազօր
ժողովում, գոլիս է տիրում Սոտարա-
բատին, որի կառավարիչ Մահամմէդ -
Օտաման բէզն երկիւղէն փախչումէ առանց
պատերազմելոյ: Կաջիր Շահի զօրա-
պետները կրկին տիրումն Ռատարաբատին,
վասնորոյ և Մամադ - Հասան խանը կրկին
փախչումէ ապաստանվում Թառլքման-
ներին, որոնցից թէ և Կաջիրն սաստիկ
պահանջումէ զնա, բայց նոքա ըստ նուի-
բական օրինաց հիւրընկալութեան, նրան
չեն մատնում, բացէ ի բաց մերժելով թէ
մեր մէջումն չէ: Եւ էսպէս Մահամմէդ
- Հասան խանը տարագիր և բախտախնա-
գիր շրջումէ երբեմն անապաների և եր-
բեմն Թառլքմանների մէջը քաղցած ծա-
րաւ, միշեւ 1160 հիջրին, երբ և մեռնումէ
Կաջիր Շահը, վասնորոյ և նա կրկին
Թառլքման հեծելազօր գլխին ժողովելով,
տիրումէ Սոտարաբատին և շատ քաղոք-
ների՝ երբ և ինքեան Շահ անուանում,
ուստի և պատմիչներն այնուշետև Շահ
տիտղոսն ընծայումն նրան: Էս միջոցին
Խորասանէն քանի մի երեւելիներ եկին
Մահամմէդ - Հասան շահի գուռն՝ յայտ-
նել իւրեանց նեղութիւնն Վֆշարներէն,
և պատութիւն ինդրել, վասնորոյ և շատ
ընծաներ բերին նրան. որոնց մէջին էին
երկու հատ գոհարներ, մինը լոյս ժողով
(դուռը դարիայ) անուն 8 մսխալ ծան-
րութեամբ, միւսն նահ լուսնէ (դուռը
մահ) հինգ մսխալ: Շահն սրանց շատ
պատուեց և իւրեան նեցուկ շինեց:

Մամադ - Հասան Շահն ունեցել է
երկու որդիք՝ այս ինքն Հիւսէին - Կուլի
խան (որ էր Գաթալի շահի հայրն) և Եղա-

— Վահամմէդ խաններքինին ։ Հիւսեյն — Կուլի խանը հօր մահուանէն յետոյ սկըսումէ Զէնդ Քարիմ խանի հետ (որ ուզումէր միահեծան տիրել Պարսկաստանին) չարաչար պատերազմել . որպէս զի հօր տիտղոսն ստանայ. բայց սրան սպանեցին Շամեայ հասակումն երբ և մեռնում է Քեարիմ խանն, որի բանտիցը փախչում էր ներքինի աղայ Վահամմէդ խանը, յետը տանելով իւր եղբօր երկու որդիները այսինքն Գաթալի Շահնու ։ Հիւսեյն — Կուլի խանը, (սա իւր հօր մահուանէն յետոյ ծնուած էր Թռուքը մանների անապատի միջին. ուստի և հօր անունով կոչուած) գնումէ Վազանդարան, Էնտէղ հեծելազօր ժողովում, պատերազմում Քեարիմ խանի ժառանգների հետ. բոլորին էլ յաղթում և ինքն էլ 1212 հիջրին 21 զիւհաջջի գեղերն լոյս շաբաթ Շուշի բերթումն սպանվում իւր սպասաւորներէն: Արանէ յետոյ թագաւորումէ Գաթալի Շահն:

Վահամմէտական — Պարսկաստանի պատմութեան մէջը հետաքրքրական անցքերէն մինն է Գաթալի Շահի կեանքն: Շատ Պարսկաստան ճանապարհորդութիւն անող Խւրոպացիներ ինչ ինչ ծանօթութիւններ տուած են էս թագաւորի մասին. բայց մին տեղ բովանդակուած մինչեւ ցայսօր ինձ չեր պատահած, բաց ի Պարսկերէն Կաջարների պատմութիւնն տպուած թէհրանումն 1273 Հիջրին Գ. հասոր. որի հեղինակն է Միրզայ Վահամմէդ Թաղի Վասստօֆի, մականուանեալ լըստուուլ հսուի՝ այս ինքն լեզու կամ բարբառ տէրութեան. և ափսոս, որ սա ևս կատարեալ չէ: Ենշուշտ կամեցիւ է

Հեղինակն հաճոյանալ այժմեան թագաւորող նրա սերունդին, զանց անելով Գաթ — Ալի Շահի անձնական պակասութիւնները, որոնք թերեւս հեղինակի աշքումը չնչին առարկաներ են համարուած. ընդ հակառակն պատմաբանական մակացութեան առաջին մեծ նշանակութիւններ կունենացին:

Որքան և Գաթ — Ալի Շահը հեղգ, երկչու, անհոգ, ժլատ, կաշառասէր և հեշտասէր էր՝ էնքան էլ նա քաջ էր ճանուչում իւր աղջն և իւր հայրենիքներս սային հանգամանքները. վասն որոյ և իւր հօր եղբայր աղայ Վահամմէտ Շահի սպանուելէն յետոյ, կարողացաւ առանց խովութեան միահեծան թագաւորել բոլոր Պարսկաստանի վիրայ: «Ես նախ բոլոր Պարսկաստանի հզօր ցեղերէն և երեկի գերդաստաններէն ինքեան և իւր որդիների համար ամուսիններ ընտրեց, և իւր դուստրները կամ թունուհիները նրանց հետ ամուսնացրեց. որպէս զի նոր աղջականութեան շաղկապն ստիպէ նըրանց հնազանդ և հաւատարիմ մնան: — Երկրորդ՝ բոլոր Պարսկաստանը բաժանեց իւր չափահաս և անչափահաս որդիներին՝ նշանակելով նրանց կուսակալներ և կառավարիչներ, տալով նոցա խորհրդակից կամ պաշտօնակից ազգականութեամբ կապեալ երեկիներէն. որոնց օգուտը կախուած էր թագաւորող ցեղիցն:

Ես կուսակալ կամ կառավարիչ արքայազուններն սկզբումն ծշղութիւնով էին առաքում հարկերը գանձարան. բայց հետզհետէ սկսեցին զլանալ, վասն որոյ և Գաթ — Ալի Շահը թէ ոչ իւրաքանչիւր, զոնէ երկու, շատ շատ երկ տարին մին

аңыпашым Ճանապարհորդութեան անունով
մեծ բանակ զիլին ժաղոված, կշըջէր էն
կողմերն, ուստի հարկիրն չէին առաքուել.
և էս Ճանապարհորդութիւններն որքան
օգուտներ կրերէին նրան, տասնապատիկ
վեասակար էին անզանազանապէս բոլոր
հպատակներին, որպէս թէ նսպատակով
կամենում էր նա էս հնարքովը թոյլ չը
տալ նրանց հարստանալ կամ ազատուել
հարստահարութենէ ու անհնազանդու-
թեան և ապստամբութեան վերայ մտա-
ծել, որին բնական հակեալ են Պարսիկ-
ներն: Էս Ճանապարհորդութեան ժա-
մանակն որպէս որդիները, նոյնպէս նրանց
յանձնուած գաւառների երեւլիներն ու
կալուածատէրները պարտաւոր էին մե-
ծամեծ պարզեներով հաճոյացնել Շա-
հի երեսն, ի հարկէ հասարակ ժողովուր-
դը բայ ի մասնակցութենէ էն ընծանե-
րին՝ կկողոպտուէին անզուսպ բանակէն և
կզրկուէին իւրեանց հողերի բերքերէն, և
շատ անզամ շարժական և անշարժ կայ-
քերէն ևս:

Գալթ—Ելի Շահը համանման Ճանա-
պարհորդութիւն վերջին անգամն արեց
դէպի Խսպահան, որպէս զի էնտեղից զը-
նայ Գարս (Շիրազ), ուր կուսակալ էր
հինգերորդ արքայորդի Նիւսէյն—Ելի
միրզայ մականուանեալ Գարման—Գար-
մա, որի վերայ 600,000 թուման*) հարկ
էր մնացած: Շահը հասաւ Խսպահան

չորեքշաբաթ օրը կ ջամագուլ ախրի
1250 հիջրի ու իջաւ արուարձանի Աա-
դաթ—Վրաստացեալ տեղումն. յետոյ
մտաւ քաղաքն, իջևանեցաւ Նավիթ—
դաստ պալատումն: Խրկու օրէն յետոյ
հասաւ Խսպահան և Գարման—Գարմա-
ռդին մեծամեծ ընծաներով: Էս ժամա-
նակն ապստամբուած էր Ռախտիարի ժո-
զովուրդն, վասն որոյ Շ հազար հետեակ
և հեծելազօր յանձնեց եօթներորդ ար-
քայորդի Մահամմէտ—Թաղի միրզայ մա-
կանուանելոյն Նըսամուլ Աալթանէ, որ-
պէս զի գնայ հնազանդեցնէ ապստամբ-
ները, և էն տեղբանք մնացեալ հարկերը, ուս-
տի և Գարման—Գարմային վերադարձ-
րեց վերոյիշեալ արքայորդոյ հետ:

Զամազիուլ ախրի 13, Շահը զգաց
փոքր ինչ տկարութիւն, ուստի չորս օր
սենեակէն գուրս չեկաւ, և 19ին նոյն
լուսնի (13 հոկտեմբերի 1834 ամի) Կը-
զըլ—օթախ ասած սենեակումն, օրը հինգ
շաբաթի, երեք ժամ մնացած արեւմտեա-
նը, կամենալով հագնութիւն ու դուրս դաւ-
երեիլ ժողովրդեանը (որպէս զի նոքա ը-
կարծեն թէ պալատականները ծածկում
են իւրեան մահը, ինչպէս սովորութիւն
է Պարսկաստանումը). վասն որոյ ոտի վե-
րայ կանգնեց, հագաւ կապէն, կոճակնե-
րի ձգելը չվերջացրած, թոյլութիւնն
նստեց, թեկն ընկաւ Կարաբաղցի ներ-
քինի աղայ Բահրամի*) կուրծքի վերայ,

(*) Особый прибавлениј къ Кавказу 1868. г.
выпукъ первыи: Յօդուածի Հեղինակը Փետъ—А-
ли шахъ и его дѣти, Պարսկ Բերժէն կասէ 6 մի-
լիոն առողի արծաթ, Պարսկանակ զրելց ոռորի
ափակացի կամ Փրանկ.

(*) Հոյոյ Մելիք—Շահնազարեան ազգատոհման,
Զանազի զի զէն, զերի ընկած ու յետոյ Պար-
սկաստանումն ներքինացրած և առաջինն էր էն
ժամանակուայ ներքինեաց մէջն, առաջինն էր և

մի երկու անդամ շունչը քաշեց ու հողին առանդեց, 38 տարի միահեծան թագաւորելէն յետոյ:

Ուսումնական պ. Ա. Բերժէ իւր վերոյիշեալ յօդուածումն ասում է, Գալթ—Վլի շահը ծնած է 1762 ամի Փրկչին, և մեռած 1834 ամի. ուրեմն ըստ նորա 72 տարի կեանք ունեցաւ, բայց չէ յիշում ուստից է առած սրա ծննդեան էսթիւն: Կաջարների պատմութեան մէջը չէ յիշում Գալթ—Վլի շահի ծննդեան թիւն: բայց Ա. հատոր, երես 20—21, պատմելով 1194 հիջրի անցքերը, կցում է թէ «Էն ժամանակն արքայորդի Գալթ—Վլի խանն էր ինն ամեայ», . ուրեմն ծնած է եղած 1185 հիջրին: Փոքր ինչ զինի երես 22—23 նոյնը կցում է «1197 հիջրին աղայ Մահամմէտ շահն կամցաւ արքայորդի Գալթ—Վլի խանին, որ 11 ամեայ էր, ամուսնացնել արար ֆափէր խանի դստեր հետ», : Ուրեմն ծնած էր 1185 հիջրին: Էս երկու տեղ յիշելէն պէտք է եզրակացնել թէ, 65—66 տառեկան էր, երբ նա 1250 հիջրին մեռաւ, թերեւս էն մին տարիի զանազանութեան պատճառն է Պարսից տարիների կամ լուսնի հաշուով փոփոխութիւնն:

Գալթ—Վլի շահի սերունդը՝ մինչեւ ցայսօր որոշում է իւրեան մեծամեծ աշքերով, թաւ, լէն և սև յոնքերովն և առանձին իւրեան յատկացած կերպարանքի դէմքովն: Էն օրէն որ Գալթ—Վլի շահը ամուսնացել է, մինչեւ մահը 47 տարի է շարունակել. և էս միջոցումը

նրանէ ծնած են մերձ 2000 զաւակներ ու թոռներ: Արանից մեծ մասը նրա կինդանութեան ժամանակն են մեռած: Ետում է Կաջարների պատմութեան հողինակը թէ «մինչեւ ցայսօր այս ինքն պատմութեան աւարտիլն (1271 հիջրին. Փրկչի 1855 թիւ) որ 21 տարի է անցկացած նրա մահուանէն, եթէ հաշուենք Գալթ—ալի շահի մէջքէն ծնած զաւակներն ու թոռները ու ժառանգները, չէ զարմանալի, եթէ հասնեն ցտամն հազար , :

Գալթ—Վլի շահի զաւակներէն իւրեան կենդանութեան ժամանակը մեռած էին 159 հոգիք. իսկ նրա մեռնելոյ օրը 105 հոգիք կենդանի էին, սրանցից 57 հոգիք արուներ էին և 48 դուստրներ: Կաջարների պատմութեան հեղինակը Գալթ—Վլի շահի սերունդի ցուցակը զլրելիս ասում է, «արու կենդանի մնացած 57 հոգիների թուի վերայ աւելացրինք երեք հոգի ևս, որպէս զի 60 թիւը լրանայ , : Էս երեքէն երկուսի անուններն է միայն յիշում՝ այս ինքն թագաժառանգ Վբբաս միրզի և Մահամմէտ—Վլի միրզի:

Վերոգրեալ 60 որդիներէն ծնած էին 304 ուստրներ և 292 դուստրներ, այս ինքն 596 հոգիներ: Իսկ 48 դուստրներէն ծնած էին 48 ուստրներ և 59 դուստրներ, այս ինքն 107 հոգիներ. ուրեմն ընդ ամենն 814 հոգիներ. բացի 156 մինչեւ իւր մահը մեռածներէն. հանելով էս վերջին գումարէն երեք մեռածները, զորս աւելացրինք կենդանիների վերայ առ իլրացնել վաթսունական թիւն:

Կաջարների պատմութեան հեղինակը
Գյաթ—Ելի սերունդների ցուցակն առ
նուն յանուանէ գրելով, գումարներումը
սխալվում է, վասն որոյ մեք զգուշու-
թեամբ համեմատելով, ուղղեցինք։ Եւ
ինչ ինչ տեղեկութիւններ կամ ծանօ-
թութիւններ աւելացրած ենք էս յօ-
դուածումն՝ էնդունք էլ կամ ես ակա-
նատես եմ եղած կամ ժողոված եմ ա-
կանատես վկաններէ կամ նոյն իսկ Գյաթ
—Ելի շահի սերունդներէն, որոնք այժմ
սփռուած են բոլոր Պարսկաստանի մէջը։

Վերոյիշեալ Պ. Ա. Եերժէի ցուցակը
համեմատելով յետագայ ցուցակի հետ,
ի հարկէ ընթերցողը կտանէ զանազանու-
թիւն. այսու ամենայնիւ դարձեալ փառք
էն ուսումնականին, որ կարողացել է իւր
կարծ միջոցաւ Պարսկաստանումը ձա-
նապարհորդութեան ժամանակն էնքանը
ժողովել բերանացի հարց ու փորձ անե-
լով, որպէս և ինքն ևս իւր յօդուա-
ծումն էս կիսուտովանվի։

Գյաթ—Ելի շահի մեռնելէն յետոյ,
նրա էն կնանիքն, որոնք որդիներ ունէին,
կացան որպէս կարողացան, բայց նրանք՝
որոնք զաւակներ չունէին, ամուսնացան
չնչին մարդկանց հետ, մինչև անդամ շա-
հի կանանցի դռնապանների, վերջինըս-
պասաւորների, նպարավաճառների ու
կոշկակարների հետ։ Մինչեւ Մահամետ
շահը կենդանի էր, Գյաթ—Ելի շահի որ-
դիներն և թոռները ստանալով ոսմիկ,
կարողացան որպէս և իցէ ինքեանց պա-
տուով պահել, բայց Մահամետ շահի
մահուանէն յերկայ Ներկայ Կասրադդին
շահը տեսնելով էս արքայազուն խումբի
կամ դասակարգի պարագորդ կեանքը,

կտրելով կտըեց փոքր փոքր նրանց ոռո-
ծիկներն, և այժմ համարեա նրանց շա-
տերը տեսնում ես ամենայն ուրեք ծոյլ
և աղքատ ամբարտաւան աստանդական
շրջում են, և ոմանք էլ դէվրիշի շորե-
րով պորտաբոյծ ուրիշների դռներումը
կթափառին, միայն թէ առօրեայ հաց
ձեռք բերեն, և շատերն էլ ուրանում են
իւրեանց շահի սերունդէ լինեն։

Հայերի քաղաքական և կրօնական
կեանքը, մտաւոր զարգացումն, աւանա-
դութիւնները և սովորութիւններն երկու,
թերես երեք դարէն հետէ կախուած էր
Պարսկաստանէն, բայց չէ զարմանք ար-
դիօք, որ էս շրջանի միջոցումն ոչինչ
կատարեալ զրաւոր տեղեկութիւններ
չունին Հայերը, ոչ միայն վերաբերեալ
վերոյիշեալ առարկաների, այլ և իւր-
եանց երեկի ազգակից անդամների մա-
սին, այն ինչ Կաջարիէ պատմութիւնն
աւելի տեղեկութիւններ կմատուցանէ մեր
Ազգային պատմութեանը։

Եթէ Հայկազուն էին Մահամետար խան
Մոլգամիտը ուշ դօվլէ, Խոսրով խան
Վալի, միւս Խոսրով խան, Ուլիկյան խան
Ումը—դօվլէ, Եղալոյ խան, Միրզայ
Գուրգին խան, համի Խւսուֆ խան, Խւ-
սուֆ խան, աղայ Եղազուր, Ապանդիար
խան, Դաւիթ խան, Ակթի խան, աղայ
Բահրամ և լն. և լն. մինչեւ մեր ներկայ
դարի կէսն կացան ու Պարսկաստանին մե-
ծամեծ ծառայութիւններ արին ու վսեմ
պաշտօններ վարեցին, որոց շատերս ա-
կանատես ենք եղած, և այժմ նրանցով
Պարսկաստանի պատմութիւնը կպարծի-
ինչի՞ ուրեմն մեք Հայերս լուռ—մունջ
անտարբեր մնանք։ Առում եմ էս տեղ

Էն հոյակասղ անձանց համար, որոնք այժմ կենդանի են և հանրածանօթ ու մեծամեծ պաշտօններ կվարեն Պարսկաստանի տէրութեանը մշջն՝ կամ արտաքոյ էն տէրութեանը:

Եհա պատճառն, որ ստիպեց ինձ ձեռամուխ լինել առ այժմ էս յետագայ յօդուածը թարգմանել և հրատարակել:

Գտն—Ելի Շահի որդիներէ և նրանց արդաւանդներէ անուններն և դուստրներէ որւանուններն:

Ե. Երբաս միրզայ Նայիբ ուլ Սուլթանէ, այս ինքն թագաժառանդ, ծնեց չորեքշաբաթի օրը 4 զիկհաջջէի 1203 հիջրի, Պազանդարանի Նեփա մհալումը՝ Գուլուի կաջար Գաթ—Ելի խանի զըստերէն: Երբաս միրզէն պատերազմական հոգի ունէր և տեղեակ էր էս արհեստին, բայց ինչպէս շատ ականատեսներ կվկայէին՝ շտապող էր: Պայիլազդիր էր և նաստավին ասած ձեռագիրն շատ քաջ կդրէր. անզիր գիտէր շատ ոտանաւորներ իւրեանց բանաստեղծների՝ մանաւանդ Շահնամէի: Մեռու Մաշհատումը 47-ամեայ՝ այս ինքն 10 ջամատիուլ ախրի 1249 հիջրի, որ համապատասխան է 10 դեկտեմբերի 1833 ամի Փրկչին, մին տարի իւր հօր մահուանէն առաջ, և թողեց 48 դաւակներ, սրանցից 26 ուստերք և 22 դուստերք էին: Եռաջներորդ նրա որդին Պահամմէտ միրզայ (որ Գաթ—Ելի շահէն յետոյ թագաւորեց և նրա որդի Նասրազդին շահն է ներկայ թագաւորն) ծնած էր 6 զիկհադրէի 1222 հիջրի կաջար Միրզայ—Պահամմէտ խան Դոլուի դստերէն: 2, Բահրամ միրզայ Մուռզ

ուլ դօվլէ: 3, Պահանդիր միրզայ: 4, Բահրաման միրզայ, Պահամմէտ միրզի հետ մին մօրէ ծնած և այժմ Շահը կրնակի: 5, Գրիդօն միրզայ մականուանեալ Գէրման—Գէրմա: 6, Սկեանդար միրզայ: 7, Խոսրով միրզայ, որ գնաց Ա. Պ. Ռուբդ Գըրիբայեղովի մահուան պատճառաւ: 8, Պահրաման միրզայ՝ համամայր Պահամմէտ միրզի: 9, Երտաշիր միրզայ: 10, Եհմետ միրզայ: 11, Պահբէր—կուլի միրզայ: 12, Մուստաֆայ—կուլի միրզայ: 13, Սուլթան—Մուրադ միրզայ մականուանեալ Հըսամուլ սուլթանէ: 14, Մանուչէր միրզայ: 15, Գարհադ միրզայ: 16, Գիրուզ միրզայ՝ մականուանեալ Եռուրաթ ուլ դօվլա: 17, Խանկար միրզայ՝ մականուանեալ Լիհթըշամ ուլ դովլէ: 18, Տըհազըր միրզայ: 19, Մահամմէտ—Բահիմ միրզայ մականուանեալն Օխա ուլ դովլէ: 20, Մէհմէտ—կուլի միրզայ: 21, Համզէ միրզայ մականուանեալն Հէլմիթ ուլ դովլէ, որ եկաւ Թիֆլիս 1871 ամին: 22, Խղըրում—բայեազիդ միրզայ: 23, Լութֆուլլա միրզայ: 24, Մահամմէտ—Քեւարիմ միրզայ: 25, Պահբէրխան: 26 Երդուլլայ խան:

Ե. Պահամմէդ—Ելի միրզայ, մականուանեալն Գօվլաթը Շահ, ծնած է 7 Պարբիկսանի 1203 հիջրի, Նէվակասարումն. սա ունէր 24 զաւակներ, որոնցից 10 արուներ էին, և 14 դուստերներ: Եռաջն օրդին Պահամմէդ—Հիւսէյն միրզայ Հէշմաթ ուլ դովլէ վերանուանեալ: 2, Թահմասհըր միրզայ Մուիդ ուլ դովլէ: 3, Նասրուլլայ միրզայ վերանուանեալ Վալի: 4, Լակուլլայ միրզայ: 5, Գաթուլլայ միրզայ: 6, Խմամ—կուլի միր-

զայ մականուանեալն Խմադուլ գովլէ: 7, Կուր ուլ գէհը միրզայ: 8, ԶՀանգիր միրզայ: 9, Մահամետ—Ռահիմ միրզայ: 10, Աբուլ—Հասան միրզայ:

Գ. Մահամետ—Կուլի միրզայ՝ մականուանեալն Մուլք Երա, երեելի բառաստեղծ էր (շայեր), ծնել է չորեքշաբաթի օրը 22 բամազանի 1203 հիջրէ Նէվա կասարումն և սրանէ 46 զաւակներ ծնան, որոնց 23 արուք էին և 23 դուսարներ: 1, Մահամետ Քեազում միրզայ: 2, Թէխմուրազ միրզայ: 3, Ըլքեանգար միրզայ: 4, Ռազի ուլ Խման միրզայ: 5, Կուզար միրզայ: 6, Կահրաման միրզայ: 7, Երտաշիր միրզայ: 8, Առլիթան Հասան միրզայ: 9, Առլիթան Հասան միրզայ: 10, Կարաք միրզայ: 11, Կասրուլա միրզայ: 12, Կուր ուլ Դահշըր միրզայ: 13, Շափուր միրզայ: 14, Ռէբը միրզայ: 15, Ռէյումարս միրզայ: 16 Սամ միրզայ: 17, Երդուլայ միրզայ: 18, Մելիք — Զէմշիդ միրզայ: 19, Շահմանառ միրզայ: 20, Լուքֆալի միրզայ: 21, Ռհազը միրզայ: 22, Մահամետ Ռահիմ միրզայ: 23, Մելիք Ռէշմէն միրզայ:

Դ. Մահամետ — Վէլի միրզայ. որ ծնել է ուրբաթի օրն սկզբում Շէվլաշի 1203 հիջրի. սա ունէր 46 զաւակներ. որանց 26 արուներ էին և 20 դուսարներ: 1, որդին Խմայիլ միրզայ, որի մայրն էր Գհօրդան Շապուցին: 2, Զանգիդ միրզայ: 3, Կասրուլա միրզայ, որի մայրն էր գուստը Նիշարուրի կուսակալ Հիւսէյն կուլի խան Բայեաթի: 4, Մահամետ միրզայ, որի մայրն էր գուստը Մօհալի խանի եղբօր Երեանցի Կաջար:

Մահամետ խանի: 5, Զավար — Կուլի միրզայ, սրա մայրն էր Կարայի Եսհակ խանի: 6, Պղայ Կուլի միրզայ, մայրն էր Խօրասանցի: 7, Թէյմուր — շահ միրզայ, համամայր Զանգիդ միրզայի հետ: 8, Շիր դիլ խան, համամայր Պղայ Կուլի միրզի հետ: 9, Հազի խան, համամայր Վերնոյն: 10, Զըլալէդղին միրզայ, մայրն էր Կուրաշի սէխզներէն: 11, Մահամետ Թահէր միրզայ: 12, Մահամետ Եղիմ խան, համամայր Մահամետ միրզի հետ: 13, ԶՀանգիր միրզայ, Զանգիդ միրզի հետ համամայր: 14, Հասան խան, համամայր Կասրուլայ միրզի հետ: 15, Մուսախան, համամայր Պղայ Կուլի միրզին: 16, Զավար խան, համամայր Մահամետ Թահէր միրզին: 17, Մահամետ Վէլի միրզայ կոչուած իւր հօր անունովը, համամայր Զէլալէդղին միրզի հետ: 18, Շիր — Մահամետ խան, համամայր Մահամետ — Վալի միրզի հետ: 19, Եմիրխան, համամայր Պղայ — Կուլի միրզի հետ: 20, Շահրուխ միրզայ: 21, Թահէմասէր — Կուլի միրզայ: 22, Մէհմէթի Կուլի միրզայ: 23, Երբաս խան, 24, Եհմեդ խան: 25, Մասուդ միրզայ, համամայր Վրբաս խանի: 26, Այիթ միրզայ համամայր Եհմեդ խանի:

Ե. Հիւսէյն Ելի միրզայ Գէրման Գէրմա, որ էր կուսակալ Գարսստանի, ծնել է Նէվա կասարումն, նովրուզի օրն 1203 հիջրի. ունէր սա 26 զաւակներ, որոնց 19 արուներ և 7 դուսարներ էին: 1, Որդին մականուանեալն Կայիր ուլ աշեալէ Պղայ — Կուլի միրզայ, որի մայրն էր գուստը Մահամետ — Կուլի խան Ուշեցի Եֆշարի: 2, Խմամ — Կուլի միրզայ.

որի մայրն էր Մազանդարանի երևելիներէն: 3, Կաջափ—կուլի միրզայ, Վալի մականուանեալ, սրա մայրն էր *) Վը բաստանի կողմէն: 4, Կասրուլլայ միրզայ համամայր Խմամ կուլի միրզին: 5, Թէյմուր միրզայ, մականուանեալն Հսամուլ գովիէ, համամայր Քզա—կուլի միրզին: 6, Շահրուխ միրզայ համամայր Կաշափ—կուլի միրզին: 7, Զհանգիր միրզայ: 8, Աքպար միրզայ համամայր Շահրուխ միրզին: 9, Վէյ խօսրով միրզայ, մականուանեալ Սուփահ Աղար. սորա մայրն էր գուստը Օհմէրէնլու Ըմիրզունէ խանի: 10, Խաքեանդար միրզայ, համամայր Թէյմուրազ միրզի հետ: 11, Կազը միրզայ, համամայր Խմամ կուլի միրզի: 12, Մահամեդ—Քեազում միրզայ, մայրն էր Շիրազի: 13, Մահամեդ միրզայ՝ համամայր Քզայ կուլի միրզին: 14, Քամրան միրզայ: 15, Դարար միրզայ: 16, Սուլթան—Խրահիմ միրզայ, համամայր Քամրան միրզին: 17, Մանուչէհր միրզայ, մայրն էր Թօռլքմա-

նու հի: 18, Լյուրաջ միրզայ՝ համամայր վերնոյն և միասին են ծնած (երկուորեակ): 19, Թահմասէր միրզայ:

(Ե. Հ. Պ. Պ. Պ. Ա. Ա.)

ԳԱՐԱԿԱՆ ՇՐՋԱԿԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՄԱՐ ԽՄ ՏԵՍԱԿԹԻՒՆ

ՄԵՐ ՆԵՐԿԵՑ ԳՐՈՒԹԵԸՆ ՎԵՐԵՑ.

(ԲՐԵ Բ--Բ ՀԱՅԱՀ)

Մեր մէջ այժմ մի խնդիր եւս աւելի կյուզուի, այն է բանիմաց քահանաների պակասութիւնը. այս պատճառաւ ոմանք մեզադրում են հոգեւոր իշխանութեան. սակայն եթէ խորը գրնալու լինինք՝ մեր Հոգեւոր իշխանութիւնը բոլորովին յանցանք չունի այս դէպքում, որովհետեւ մեր ժողովուրդը այժմ այնպիսի խեղճ գրութեան մէջ է, որոյ կամքը գողանալու համար բաւական է մի մի բաժակ. եւ ահա՝ բազմութիւնը բռնելով մի դպրի ձեռքից՝ գոչում են „Ձւ ուշ - ուշ էլ աստ էս ա, չւ+ առյ՝ էս ա, իւնուց+անան+ու աս տան ու յեւնադրէ+... Հոգեւոր իշխանութիւնն եւս երկուց չարեաց փոքրագոյնը ընտրելու համար՝ եթէ բարուց վարուց եւ կարելի եղած ուսմանց կողմանէ աւելի թերութիւններ չկան՝ նոցացանկութիւնը կատարում է, կամեցածների պէս նոր ծնածը մկրտող, մեռածը թաղօղ պաշտօնեաներ տալով մինչեւ որ ծխական դպրոցներն հասնին իւրեանց,

(*) Պարսիկները Վրաստանէն բերած զերիները չկարողանալով զանազանել Հայ թէ Արքացի լինելը, և մանաւանդ զերիքը թէ արու թէ էդ երեխայ կամ՝ անչափահաս լինելով, և ըստ սովորութեան Վրաստանցի Հայերի՝ իւրեանց մայրնեական լեզուով չխօսած, չն կարողացած յայտնել իւրեանց ինչ ազգէ լինեն, ուստի Պարսիկներն էլ նրանց միշտ կզրեն առ հարդառն գէրջառն՝ այս ինքն Վրաստանի մարդկանցից և ես էս բառերը Հայացնելով զրած եմ Վրաստանի կողմէն, թէև ըստ մեծի մասին նրանք Հայեր են եղած, ինչպէս հետպհատէ վերահասու լինելով մինչև նրանց աղքանուններն ես զըտած եմ կամ զերիներէն կամ նրանց զաւակներէն և թռուներէն իմանալով.